ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1962 Общественные науки

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՄԿՊ XXII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍՈՎ

Վերջին տասնամյակներում, մասնավորապես Հայրենական Մեծ պատերազմից հետո, մեր ռեսպուբլիկայում խոշոր և ինտենսիվ աշխատանք է կատարվել հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության բնագավառում։ Այդ աշխատանքը առավելապես կենտրոնացած է եղել ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում։

Մեծ թափ ու ծավալ են ստացել մեր ժողովրդի պատմության նյութական կուլտուրայի հուշարձանների ուսումնասիրությունը, սկզբնաղբյուրների և փաստաթղթերի հրատարակությունը։ Տակավին պատերազմից առաջ ձեռնարկված Կարմիր Բլուրի և Դվինի հնագիտական պեղումները մի նոր թափով վերսկսվեցին պատերազմից հետո։ Ավելի ուշ, զուգահեռաբար, պեղումներ սկսվեցին Գառնիում, Արին-բերդում, Շենգավիթում և վերջին տարիներս հայտնաբերված Լճաշենի բնակավայրերում։ Հնագիտական պեղումները, վիմագիր արձանագրությունների, Մատենադարանի ձեռագրերի հիշատակարանների մանր ժամանակագրությունների, հայ-ռուսական հարաբերությունների արխիվային վավերագրերի ժողովածուների և այլ սկզբնաղբյուրների հրատարակությունը հսկայական նյութեր տվեցին Հայաստանի հին ու հնագույն, վաղ և ուշ միջնադարի պատմության վերաբերյալ։

Նոր պատմության և սովետական հասարակության պատմության գիտական լուսաբանության համար մեծ նշանակություն ունեցավ գյուղացիական շարժումների, առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման վերաբերյալ փաստաթղթերի և այլ նյութերի հրատարակությունը։

Նոր դարի և սովետական շրջանի պատմության հարցերի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև հրատարակության պատրաստվող «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» և «Կուլտուրական շինարարությունը Հայաստանում» վավերագրերի ժողովածուները։

Սկզբնաղբյուրների հայտնաբերմանն ու հրատարակմանը զուգահեռ և նրանց ընձեռած նյութի ուսումնասիրության հիման վրա լայնորեն ծավալվեցին գիտա-հետազոտական աշխատանքները։

Վերստին հետազոտվեցին ու վերագնահատվեցին ոչ միայն արդեն ուսումնասիրված մի շարք պրոբլեմներ, այլև մինչ այդ բավարար ուշադրության չարժանացած առանձին թեմաներ։ Այդ ուսումնասիրությունների շնորհիվ գիտական հասարակայնությանը և ընթերցողների լայն շրջաններին ներկայացվեցին պալեոլիթի (հին քարե դար), բրոնզե դարի, հայ ժողովրդի ծագման, Ուրարտուի պատմության, ստրկատիրական հարաբերությունների, միջնադարյան Հայաստանի արհեստների ու քաղաքների, գյուղացիության պատմության

սոցիալական շարժումների հարցերին, ուշ միջնադարի սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներին, հայ հասարակական մտքի պատմությանը նվիրված բազմաթիվ կարևոր աշխատություններ։

Նոր շրջանի պատմության հանգուցային հարցերից ուսումնասիրվեցին 18-րդ դարի վերջին քառորդի ազատագրական շարժումների, հայ-ռուսական հարաբերությունների, Հայաստանը Ռուսաստանին միանալու, գյուղացիական ռեֆորմի ու կապիտալիզմի զարգացման, ագրարային հարաբերությունների, հայ իրականության մեջ նախամարքսյան ռևոլյուցիոն դեմոկրատիայի, արևմտահայ հասարակական գործիչների, մարքսիզմի տարածման ու առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի պրոբլեմները և այլ թեմաներ։

Սովետական Հայաստանի ամբողջական պատմությունը փաստորեն մշակվել է ետպատերազմյան շրջանում։ Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հրատարակվեցին մենագրություններ, ժողովածուներ ու բրոշյուրներ, որոնք պատկերացում են տալիս Սովետական Հայաստանի ավելի քան քառասուն տարվա պատմության հիմնական էտապների մասին։

Սկզբնաղբյուրների հրատարակումն ու հետազոտական աշխատանքների ծավալումը հնարավոր դարձրին ընդհանրացնող, ամփոփիչ բնույթի աշխատությունների ստեղծումը։ Պատմության ինստիտուտը նախապատրաստեց և 50-ական թթ. սկզբներին հրատարակեց հայ ժողովրդի հնագույն շրջանից մինչև մեր օրերն ընդգրկող պատմության եռահատոր ձեռնարկ։ Ճիշտ է, այդ ձեռնարկը շարադրված էր հիմնականում ըստ միջնակարգ դպրոցի աշակերտության պահանջների և որոշ չափով սխեմատիկ բնույթ էր կրում, այսուհանդերձ՝ դրա ստեղծումը մեր պատմագրության կողմից մի խոշոր առաջընթաց քայլ էր։ Եռահատոր ձեռնարկի մեջ ընդհանուր գծերով ամփոփված են ոչ միայն սովետահայ պատմագրության նվաճումները, այլև լուծված են մի շարք պրոբլեմներ, մասնավորապես հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հետ կապված որոշ հարցեր։

Ինչպես հայտնի է, անհատի պաշտամունքի վնասակար հետևանքների հաղթահարումը սկսվել էր տակավին ՍՄԿՊ XX համագումարից։ ՍՄԿՊ XX համագումարից հետո պարզ դարձան նախորդ տարիների պատմագրության այնպիսի թերություններ, ինչպիսիք են ժողովրդական մասսաների դերի, հատկապես ետպատերազմյան շրջանի պրոբլեմների անբավարար լուսաբանումը, պատմության գունազարդումը և ուրիշ թերացումներ։ Համագումարը դրեց սովետական պատմագիտական բոլոր աշխատանքների արմատական վերակառուցման սկիզբը։ Սովետական ամբողջ պատմագրության մեջ սկսվեց ստեղծագործական աշխուժություն, որն ամենից առաջ արտահայտվեց խոշոր, ընդհանրացնող կոլեկտիվ աշխատությունների հրատարակությամբ։ 1955 թ. սկսվեց և շուտով կավարտվի «Համաշխարհային պատմության» տասհատորյակի հրատարակությունը, հրատարակվել են «Հայրենական Մեծ պատերազմի պատմություն» վեցհատորյակի երեք հատորները, ավարտվեց ՍՍՌՄ-ի «Քաղաքացիական պատերազմի պատմության» հինգհատորյակի հրատարակությունը։ Մեզ մոտ, սովետահայ պատմագրության ստեղծագործական առաջընթացը արտահայտվեց թեմատիկայի ակտուալացմամբ, ուսումնասիրությունների խորացմամբ, մինչ այդ հետազոտության նյութ չդարձած կամ գրեթե չուսումնասիրված թեմաների մշակմամբ։

ՍՄԿՊ XX համագումարից հետո առաջացած որոշ աշխուժացումը ցույց տալու համար բավական է թեկուզ համառոտակի ակնարկ ձգել Պատմության ինստիտուտի վերջին տարիների կատարած աշխատանքների հիմնական արդյունքների վրա։

Վերջին հինգ-վեց տարիների ընթացքում Սովետական Հայաստանի պատմության մշակումը զգալիորեն բարելավվել է ոչ միայն նրանով, որ քանակական տեսակետից ավելի շատ աշխատություններ են հրատարակվել, այլև թեմատիկան ավելի բազմազան, փաստական նյութով ավելի հագեցված է դարձել։ Նշանակալից աշխատանք է կատարվել Սովետական Հայաստանի պատմության առանձին էտապների ամբողջական ուսումնասիրման ուղղությամբ։

Բավական լուրջ քայլեր են արվել Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմություն ստեղծելու, սոցիալիստական շինարարության տարբեր էտապներում նրա դերը և ստեղծագործական փորձը ընդհանրացնելու ասպարեզում։ Կարևորագույն այս խնդրի իրականացման համար խոշոր նշանակություն ունի Հայաստանի սոցիալիստական քաղաքների, առանձին գործարանների ու սովխոզների պատմության ուսումնասիրությունը։ Այս բնագավառում ևս ինստիտուտը որոշ հաջողությունների է հասել։

Ինստիտուտին կից գործող Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության հանձնաժողովը բավական գործունեություն է ծավալել նախասովետական շրջանի ագրարային հարաբերությունների պատմության ուսումնասիրման բնագավառում։

Հանրահայտ է, որ մեր ժողովրդի ամբողջական պատմությունը անհնար է ներկայացնել առանց նրա բաղկացուցիչ մասը կազմող հայ գաղութների պատմության։ Հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետևանքով աշխարհով մեկ սփռված հայ գաղութները ոչ միայն կապված են եղել մայր հայրենիքի հետ, այլև նշանակալից, հաճախ շատ կարևոր դեր են խաղացել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում, և առանց այդ գաղութների ուսումնասիրության մեր ժողովրդի պատմությունը միակողմանի, թերի կլինի։ Չնայած այս անառարկելի ճշմարտությանը, մինչև վերջերս հայ գաղութների ուսումնասիրությունը անուշադրության էր մատնված, համենայն դեպս այդ ուղղությամբ որևէ կազմակերպված աշխատանք չէր տարվում։

1959 թ. Պատմության ինստիտուտում կազմակերպվեց գերազանցապես հայ գաղութներով զբաղվող հատուկ սեկտոր, որտեղ ուսումնասիրվում է Ղրիմի, Նոր Նախիջևանի, Աստրախանի, Գրիգորիոպոլի, Բուլգարիայի հայկական գաղութների պատմությունը և շուտով կավարտվեն դրանց վերաբերյալ առանձին մենագրություններ։ Սեկտորը առաջիկայում ավելի կծավալի իր գործունեությունը առավել լայնորեն ընդգրկելով արտասահմանյան հայ գաղութների պատմությունը։

Ուկրաինական ՍԱՌ Գիտությունների ակադեմիայի Լվովի Հասարակական գիտությունների ինստիտուտի պատմության բաժնի հետ գիտական կապեր են ստեղծվել և փոխադարձ համաձայնությամբ նրանք զգալի գործունեություն են ծավալել տեղի լեհական ու ուկրաինական հարուստ աղբյուրների հիման վրա Արևմտյան Ուկրաինայի հայ գաղթավայրերի պատմությունը բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար։ Ինստիտուտն արդեն հրատարակության է հանձնել Յու. Ռ. Բաշկևիչի «Արևմտյան Ուկրաինայի հայ գաղութների պատմագրությունը 16—19-րդ դդ.» ուշագրավ աշխատությունը։ Մինչև 1965 թ. հրա-

տարակության են պատրաստվելու «Ուկրաինայի հայկական գաղութները 15—18-րդ դարերում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, «Ուրվագծեր Ուկրաինայի հայ գաղութների պատմության» մենագրությունը, «Լվովի հայ գաղութի պատմությունից 14—15-րդ դդ.», «Հայերի դերը Լվով քաղաքի առևտրում 14—16-րդ դարերում», «Հայերը և նրանց դերը Ուկրաինայի արվեստի զարգացման գործում 14—18-րդ դդ.», «Մխիթար Գոշի դատաստանագիրքը և նրա կիրառումը Լվովում 15—18-րդ դդ.», «Ուկրաինայի հայ գաղութների ազգագրական ուսումնասիրությունը» հոդվածները և այլ ուսումնասիրություններ։

Ինչպես հայտնի է, մինչև վերջերս նոյեմբերյան ժամանակաշրջանի սփյուռքահայության կյանքի ոչ միայն քիչ թե շատ կարևոր խնդիրներ, այլ ուղղակի սփյուռքահայ պատմության հետ կապված որևէ հարց ուսումնասիրության նյութ չէր հանդիսանում։ Գրեթե տրադիցիա դարձած այդ սխալ պրակտիկան խախտելու համար ևս Ինստիտուտը որոշ աշխատանք է ծավալել։

Այսպես, 1961 թվականին ավարտվել կամ դրեթե ավարտվել են հետևյալ ուսումնասիրությունները։ Հ. Մելիքսետյանի «Սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան 1921—1925 թթ.» աշխատությունը, որի մեջ հեղինակը վեր է հանել համաշխարհային առաջին պատերազմի տարիներին արևմտահայության զանգվածային կոտորածները և բռնագաղթեցումը դեպի արաբական անապատները։ Արխիվային փաստաթղթերի և պարբերական մամուլի նյութերի հիման վրա հեղինակը ցույց է տվել Սովետական Հայաստանի կառավարության և Կոմունիստական պարտիայի հոգատար վերաբերմունքը, նյութական օգնությունն ու բարոյական աջակցությունը արևմտահայ գաղթականության նկատմամբ, հանգամանորեն լուսաբանել է սփյուռքահայ աշխատավորների 1921—1925 թվականների ներգաղթը։

Հունաստանի հայ գաղութի 1917—1927 թթ. տասնամյա պատմությանն է նվիրված Պ. Կոկինոսի ուսումնասիրությունը։ Մենագրության մեջ լուսաբանվում է հունահայ գաղութի հասարակական-քաղաքական կյանքը, հայ աշխատավորներին Հունաստանի ռևոլյուցիոն շարժումների մեջ ընդգրկելու՝ Հունաստանի կոմպարտիայի գործունեությունը, հայ և հույն բանվորների համատեղ պայքարը և այլ հարցեր։

«Սփյուռքահայ առաջադիմական ուժերի պայքարը դաշնակցության դեմ հետպատերազմյան շրջանում» մենագրության մեջ Լ. Խուրշուդյանը ուսումնասիրելով և վերլուծելով սփյուռքահայ իրականությունը, ցույց է տալիս, թե որոնք են հայկական առաջադիմական ուժերը միջազգային զարգացման արդի փուլում և թե երկու լագերների գոյության պայմաններում ինչպես են նրանք պայքարում իմպերիալիզմի, գաղութատիրության և դաշնակցության դեմ։ Բազմակողմանիորեն քննարկվում է ու գնահատվում հնչակյան և ռամկավար պարտիաների գործունեությունը։

Ընդլայնվել է հին և միջնադարյան Հայաստանի պատմության աղբյուրագիտական բազան։ Ավարտվել և հրատարակության է պատրաստվել Հայաստանին և հայերին վերաբերող լատինական և բյուզանդական աղբյուրները։

Հայաստանում արարական տիրապետության և դրան անմիջապես հաջորդած զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի տնտեսական-քաղաքական հարցերի լուսաբանման համար շատ կարևոր նշանակություն ունի Հայաստանի արարական էմիրությունների պատմության ուսումնասիրությունը։ Արդեն ավարտվել և հրատարակության է պատրաստվում «Արարական էմիրություն-

ներր Հայաստանում 9—11-րդ դդ.» (հեղինակ Ա. Տեր-Ղևոնդյան) մենագրություն, որը շարադրված է հայկական, արաբական ու բյուզանդական աղբյուրների հիման վրա։ Թուրքական աղբյուրների օգտագործմամբ շարադրված է և շուտով կավարտվի «Ջալալիների շարժումը և 16—17-րդ դդ. արևմտահայ աշխատավոր մասսաների դրությունը» ցարդ չլուսաբանված թեման (հեղինակ՝ Մ. Զուլալյան)։

Տպագրության է պատրաստված «Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին քառորդում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն Աշ. Հովհաննիսյանի ընդարձակ առաջաբանով։

Հրատարակության պրոցեսում են Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ 7-րդ դարի «Աշխարհացույցի» քարտեզը՝ ծավալուն բացատրական տեքստով, Վ. Հակոբյանի կազմած «Կանոնգիրք հայոց» ժողովածուի առաջին հատորը, Հ. Անասյանի «17-րդ դարի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների պատմությունից», Ա. Մնացականյանի «Լենինը և հայ ժողովրդի պատմական ճակատագիրը» մենագրությունները և մի շարք այլ ուսումնասիրություններ Սովետական Հայաստանի պատմության վերաբերյալ։

Անհրաժեշտ է սակայն պարզ ու որոշակի ասել, որ ՍՄԿՊ XX համագումարից հետո ընկած ժամանակամիջոցում, չնայած պատմական գիտությունների բնագավառում կատարված դրական աշխատանքին, հաճախ իրենց զգացնել էին տալիս անհատի պաշտամունքի շրջանից որդեգրված արատավոր տրադիցիաները՝ գիտական շտամպը, երևույթների մեխանիկական ըմբռնումը, մտավախությունն ու ինքնաապահովագրումը։

Եվ թերևս պատմագրությունը լիովին չազատագրվեր այդ տրադիցիաներից, եթե Պարտիայի լենինյան Կենտրոնական Կոմիտեն ժամանակին վճռական միջոցների չդիմեր և չջախջախեր հակապարտիական խմբին, որը փորձում էր հարություն տալ մեռած, սակայն անթաղ մնացած անհատի պաշտամունքին, եթե պարտիայի XXII համագումարը վերստին չարծարծեր այդ հարցերը։

ՍՄԿՊ XXII համագումարը իրոք պատմական համագումար էր ոչ միայն Սովետական Միության տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքում, արդի միջազգային ասպարեզում, այլ նաև հասարակական գիտությունների և մասնավորապես պատմական գիտության զարգացման համար։

Համագումարը պարզորոշ ցույց տվեց, թե հասարակական գիտությունների ասպարեզում գիտական մտքի զարգացման ինչպիսի խոչընդոտներ էր շարունակում հարուցել Ստալինի անձի պաշտամունքը և թե որքան լուրջ աշխատանք է պահանջվում անցյալի վնասակար հետևանքները ամբողջովին վերացնելու համար։ Միաժամանակ պարզ դարձավ, որ անհատի պաշտամունքի արմատական վերացումը հասարակական գիտությունները լիովին կազատագրի սուբյեկտիվիստական սխալների բեռից, այն տխրահռչակ «կոնյուկտուրշչինայից» ու դոգմատիզմից, որը խանգարում էր գիտական ստեղծագործական աշխատանքին։

Պատմագիտության զարգացումն արգելակող այդ երևույթներին մեկընդմիշտ վերջ տալու համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզ պատկերացում կազմել, թե որո՞նք են անհատի պաշտամունքի վնասակար ազդեցության հետևանքները և ի՞նչ ձևերով են դրսևորվել պատմագիտության մեջ։

Որոշ ընկերներ անհատի պաշտամունքի դեմ մղվող պայքարը փաստորեն հանգեցնում են սոսկ նրան, որ իրենց աշխատություններում չեն հիշատակում

Ստալինի անունը և նրանից մեջբերումներ չեն կատարում։ Վերջին հինգ-վեց տարում հիմնականում այսպիսի պարզեցված, մակերեսային եղանակով է ընթացել պատմագիտության մեջ անհատի պաշտամունքի դեմ մղվող պայքարը։

Անհատի պաշտամունքի վնասակար հետևանքը արտահայտվել է նախ նրանով, որ Ստալինը սուբյեկտիվիստական մեկնություններ է տվել շատ իրադարձությունների և մշտապես մեծացրել սեփական դերը պատմության մեջ։ Մասնավորապես ռուսական ռևոլյուցիաների ժամանակաշրջանի և սոցիալիստական շինարարության վերաբերյալ աշխատություններում գրվում էին միայն անձամբ Ստալինի և նրա գործունեության հետ կապված գործիչների ու փաստերի մասին։ Այս ասպարեզում պատմական ճշմարտություններ վերականգնելու ուղղությամբ ՍՄԿՊ XX համագումարից հետո որոշ հաջողություններ են ձեռքբերվել, սակայն, կատարված աշխատանքը դեռևս հեռու է բավարար լինելուց։ Այլ կերպ ինչպե՞ս կարելի է բացատրել, որ լենինյան գվարդիայի մի շարք պայծառ բոլշևիկների, պարտիական ու պետական նշանավոր գործիչների, ինչպես, օրինակ՝ Ս. Լուկաշինի (Ս. Սրապիոնյան), Ս. Տեր-Գաբրիելյանի և ուրիշների կյանքի ու գործունեության մասին սովետահայ պատմագրությունը մինչև օրս մի համառոտ ակնարկ անգամ չի տվել, էլ չենք խոսում ընդհանրացնող, ծավալուն աշխատության մասին, որին նրանք միանգամայն արժանի են։ Լուկաշինի և մյուսների մասին պատմական իրողությունը վերականգնելը դեռևս քիչ է։ Նրանց անրիծ կյանքն ու գործը լավագույն տիպար են նոր սերնդի համար։ Նրանց մասին գրված աշխատությունը զգալի դեր կխաղար երիտասարդության դաստիարակության գործում։

Սակայն Ստալինի անձի հետ կապված երևույթներին օբյեկտիվ մեկնաբանություն տալը անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները վերացնելու միակ ուղին չէ։ Կարևորն այն է, որ 30-ական թթ. սկզբներին սկսվել և ժամանակի ընթացքում արմատավորվել է ուսումնասիրության միակողմանի, անգամ, կարելի է ասել, սխալ մեթոդ։

XXII համագումարի որոշումների ոգով և այդ դիտակետից գնահատելով ու վերագնահատելով մեր անցյալ 30-ամյա պատմագրության նվաճումներն ու թերացումները՝ դժվար չէ հետևեցնել, որ ներկայումս դոգմատիզմի, «կոնյուկտուրշչինայի», փաստերի նկատմամբ կամայական վերաբերմունքի դեմ մղվող պայքարը, պատմականության մարքս-լենինյան սկզբունքի ու պատմական ճշմարտության լիարժեք վերականգնումն է, պատմագիտության մեջ, անհատի պաշտամունքի վնասակար հետևանքների վերացման ռեալ ուղին։

Պատմական որոշ ժամանակաշրջանից սկսած մինչև 50-ական թվականների կեսերը հասարակական գիտությունների և մասնավորապես պատմագիտության բնագավառում անհրաժեշտ և անառարկելի պահանջ էր դարձել Ստալինի աշխատություններից ցիտելը։ Իսկ եթե ցիտելու հնարավորություն չէր լինում, ապա հարմարեցնում, կամ ուսումնասիրվող թեմային գրեթե չառնչվող մեջբերումներ էին կատարվում։ Ժամանակի ընթացքում ցիտատներով վահանավորված աշխատությունների առջև ճանապարհ հարթելը և այն անխոցելի դարձնելը այն աստիճան տարածվեց ու արմատավորվեց, որ հաճախ ցիտատները սկսեցին փոխարինել փաստերին։ Հոգ չէ, որ այս կամ այս դրույթը ապացուցելու բավարար փաստերը բացակայում էին կամ առհասարակ գոյություն չունեին։ Կարևոր էր համարվում փնտրել և գտնել ցիտատ, իսկ

ներն այդպիսին չկար՝ որևէ համընդհանուր միտք և դրանով ցույց տալ իր դրության ճշտությունը, դիտականությունը։

Զարմանալի չէ, որ այդ պայմաններում երևան էին գալիս գրեթե փաստագուրկ, իրականությունից կտրված, սխեմատիկ աշխատություններ։

Կատարվում էր նաև հակառակ պրոցեսը։ Աշխատությունները այնքան լին ծանրաբեռնում փաստերով ու նյութերով, որ դրանք վերածվում էին մի էմպիրիկ շարադրանքի և կրում զուտ փաստագրական բնույթ՝ առանց համապատասխան վերլուծության և հետևությունների։

Պարզ է, որ երկու դեպքում էլ նման աշխատությունները ընթերցողների մոտ լավ ընդունելություն չէին կարող գտնել։

Մի քանի խոսք պատմության հարցերին նվիրված հետազոտություններում դեռևս նկատվող, մեր կարծիքով ուսումնասիրության ոչ ճիշտ մեթոդի մասին։

Ինչպես հայտնի է, պատմական ամեն մի ֆորմացիայում դեռևս առկա են լինում նախորդ դարաշրջանի մնացուկները և նոր հասարակական-տնտեսական հարաբերությունների սաղմերը։ Հետևաբար պատմական ամեն մի կոնկրետ շրջանի բարդ պրոցեսը լավ հասկանալու և ճիշտ հետևությունների հանգելու համար հույժ կարևոր է փաստերի բազմակողմանի վերլուծությունը, տվյալ երևույթին բնորոշ, տիպիկական փաստերը ճանաչելը և դրանք ճիշտ գնահատելը։ Այլապես հեշտությամբ կարելի է սխալվել։ Մեր միտքն ավելի կոնկրետացնելու նպատակով բերենք մի այսպիսի օրինակ։ Միջնադարյան Հայաստանում վերածննդի գոյության տեսակետը պաշտպանող գիտնականները վարձու աշխատանքի, դրամական հարաբերությունների և դրեթե ամենուրեք ֆեոդալիզմին և ոչ միայն ֆեոդալիզմին հատուկ նման երևույթների վերաբերյալ որոշ փաստեր բերելով և այլ երկրների ու այլ սոցիալ-պատմական միջավայրի ծնունդ հանդիսացող երևույթների հետ անալոգիաներ անելով փորձում են ապացուցել վերածննդի համար տնտեսական բազա հանդիսացող կապիտալիստական հարաբերությունների կամ նրա կացութաձևի սաղմնավորումը։

Պատմական զարգացման այս կամ այն էտապում հասարակական-տնտեսական բարդ պրոցեսում տվյալ դարաշրջանին բնորոշ, այն բնութագրող երևույթները ճանաչելը հույժ կարևոր է գիտական ուսումնասիրության համար, այլապես անխուսափելի է դառնում սխալվելը։

Անհատի պաշտամունքի շրջանում ծաղկող դոգմատիզմը իրեն զգացնել էր տալիս նաև մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններից օգտվելիս։ Մարքս-լենինյան ուսմունքով զինվելուն, այդ ուսմունքով ամենուրեք և ամեն ժամանակ առաջնորդվելուն, գիտական աշխատանքներում այն հրամտորեն կիրառելուն երբեմն փոխարինում էին մարքսիզմի կլասիկներից անհարկի մեջբերումները (բնդ սմին հաճախ հարմարեցնելով ցիտատները կամ կամայականորեն վարվելով դրանց հետ), փաստերն արհամարհելու դյուրին, բայց անխրախուսելի եղանակը։

Անտեսվում էր, վերջապես, այն հանգամանքը, որ կարելի է գիտական, մարքսիստական տեսակետից առավել կուռ աշխատություն գրել և նույնիսկ մեջբերումներ չկատարել մարքսիզմի կլասիկներից և ընդհակառակն, հնարավոր է, որ աշխատությունը լեցուն լինի ցիտատներով, սակայն այն մարքսիստական տեսակետից տառապի մակերեսայնությամբ և անդամ լուրջ թերություններով։

Գիտական կոնկրետ խնդիրներ ուսումնասիրելիս մարքս-լենինյան ուսմունքը հմտորեն կիրառելու և փաստական նյութը օբյեկտիվորեն ընդհանրացնելու անկարողության հետևանքով է, որ հայ ժողովրդի պատմության գլխավոր խնդիրները լուսաբանելիս, երբեմն տրամագծորեն հակառակ տեսակետներ ունեցող հետազոտողները իրենց դրույթները հիմնավորելու համար երկուստեք բերում են նույն փաստերը և ցիտում մարքսիզմի նույն կլասիկներից։

Անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները արտահայտվել են պատմության մոգեռնացման՝ հաճախ ցանկալին իրականության տեղ ընդունելու ուսումնասիրության արատավոր եղանակի մեջ ևս։ Մի շարք հետազոտություններում, օրինակ, հարցերը առաջ են քաշվում և մեկնաբանվում այնպիսի եղանակով, որ կամա թե ակամա դուրս է գալիս, թե բոլշևիկյան պարտիայի, բոլշևիզմի գաղափարները իրենց առաջացման օրից համակել են ժողովրդական մասսաներին այն աստիճան, որ առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի տարիներին աշխատավորական մասսաները գրեթե ամբողջությամբ համախմբված գնում էին այդ պարտիայի հետևից։ Այդ նույն բանը արդեն առավել անառարկելի էր համարվում 1917 թ. փետրվարյան ռևոլյուցիայի ժամանակ։

Նման գունազարդված, փաստերի հետ հաշվի չնստող միակողմանի մոտեցումը, հասկանալի է, ոչ միայն չի ծառայում իր նպատակին, այլև կարող է հակառակ արդյունքի հանգեցնել։ Անկախ ուսումնասիրողի կամքից ու ցանկությունից, օբյեկտիվորեն նսեմացվում է բոլշևիկյան պարտիայի մղած դժվարին պայքարը բուրժուական պարտիաների ու զանազան հոսանքների դեմ՝ մասսաների մեջ մեծամասնություն գրավելու համար, մի պայքար, որը ինչպես հայտնի է, Անդրկովկասի պայմաններում շարունակվեց մինչև 1920 թվականը։

Ինքնին հասկանալի է, որ բոլշևիզմի գաղափարները, իրենց ծագման հենց սկզբից հարազատորեն արտահայտել են աշխատավորական մասսաների և առաջին հերթին բանվոր դասակարգի իղձերն ու նպատակները, սակայն, անհրաժեշտ է ցույց տալ, որ այդ գաղափարները աստիճանաբար, պատմական զարգացման որոշ շրջանում են դառնում մասսաների սեփականությունը։

Պատմականության սկզբունքի պահպանումը, փաստերին գիտական բացատրություն տալը, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների մերկացման և բոլշևիկյան պարտիայի մղած հերոսական պայքարի ամենամեծ ապացույցը կարող է լինել։

Անհատի պաշտամունքի հետևանքով ստեղծվել էին այնպիսի պայմաններ, որ քաղաքական տեսակետից սուր, գիտական կնճռոտ հարցերին չէին անդրադառնում, սքողում, պարզապես խույս էին տալիս դրանցից։ Բերենք միայն մեկ օրինակ։ Հայաստանում 1905—1907 թթ. բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիային նվիրված շատ ուսումնասիրություններում պահանջվածից ավելի տեղ է հատկացվում ռևոլյուցիայի ընդհանուր, համառուսական իրադարձությունների շարադրմանը, իսկ հայ-ադրբեջանական ընդհարումների մասին, որով ալեկոծվում էր այն ժամանակ ամբողջ հայ հասարակայնությունն ու Անդրկովկասը, գրեթե չի խոսվում։ Անտեսվում է այն պարզ իրողությունը, որ այդ ընդհարումների մասին խոսելն ու մարքսիստական, գիտական բացատրություն տալը մեծ չափով կբացահայտի առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի տարիներին Անդրկովկասում ստեղծված իրադրությունը, ռևոլյուցիայի հետ կապված շատ հարցեր, որ դրանով իսկ կմերկացվեն այդ ընդհարումների իսկական

կազմակերպիչները՝ ցարիզմը և ազգայնական պարտիաները, որոնք ազգամիջյան ընդհարումներ հրահրելով ձգտում էին պառակտել ռևոլյուցիոն ուժերը։

Անկախ նրանից, մենք այդ մասին գրում ենք, թե ոչ, ներկայումս ապրում են այդ դեպքերի շատ ժամանակակիցներ ու ականատեսներ, իսկ շատերի հիշողության մեջ այլևայլ դրականության ու կենդանի խոսքի միջոցով տակավին թարմ է մնացել այդ կոտորածների ու նրա գործած արհավիրքների պատմությունը։ Հետևարար, հարցը կոծկելը կամ մի քանի ընդհանուր բնույթի դատողություններ անելը ընթերցողի մեջ կարող են միայն կասկած հարուցել տվյալ աշխատության գիտական լիարժեքության վերաբերյալ։

Այդ նույն ձևով մինչև վերջերս ուսումնասիրության նյութ չէին դարձել 19-րդ դարի վերջի և 20-րդ դ. սկզբի ազգային-ազատագրական շարժման բազմաթիվ խնդիրներ, 1918 թ. Սարդարապատի և Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը և այլ հարցեր։

Անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները ամենից ավելի ազդել են սովետական ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության վրա։ Այդ առումով հատկապես անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել, առաջին հերթին, Սովետական Հայաստանի պատմության գիտական մշակման, ժամանակի պահանջով թելադրված միակողմանիությունն ու թերությունները վերացնելու վրա։

Անվիճելի է, որ 30-ական թվականներին և նրանից հետո ընկած շրջանին վերաբերող մի շարք աշխատություններում լրիվ ցույց չեն տրվում սոցիալիստական շինարարության ընթացքն արգելակող դժվարություններն ու բացասական մոմենտները։ Թերությունների և դժվարությունների մասին լռելը խեղաթյուրում ու դժգույն է դարձնում պատմական ռեալ իրականությունը և դրանով իսկ ակամա իջեցնում այն խոշոր հաջողությունների նշանակությունը, որի ականատեսն ենք հանդիսանում մենք։

Պատմագրության մեջ արմատավորված դոգմատիզմին ու սխեմատիզմին մեծապես նպաստում էին Սովետական ինչպես և նոր շրջանի պատմության արխիվային փաստաթղթերի օգտագործման սահմանափակ հնարավորությունները, արխիվներից օգտվելու մի շարք արհեստական արգելքների ստեղծումը։

Հարկավոր է մեկընդմիշտ արմատախիլ անել, թեկուզ և լռելյայն գոյություն ունեցող, այն թյուր կարծիքը, ըստ որի պատմական ուսումնասիրության առարկա կարող են դառնալ միայն անցյալի հարցերը, համենայն դեպս արխիվային փոշիով ծածկված հարցերը։

Կ. Մարքսը և Վ. Ի. Լենինը ցույց են տվել ժամանակակից երևույթների, իսկ երբեմն նաև իրենց վախճանին չհանգած իրադարձությունների, գիտական խոր վերլուծության փայլուն օրինակներ։

Նորագույն ժամանակաշրջանի, այդ թվում Սովետական Հայաստանի պատմության ուսումնասիրությունը առավել դժվարին է, քանի որ այստեղ պետք է բացահայտվեն, ընդ որում գիտականորեն բացահայտվեն, ժամանակակից հարցերը, որի ականատեսն ենք մենք։ Դրանից բացի, այս շրջանը չունի ուսումնասիրության տրադիցիա, որը մեծ չափով օգնում և ուղղություն է տալիս հետազոտողին։ Սովետական շրջանով զբաղվող պատմաբանները քայլում են պատմագրության կարևոր, բայց դժվարին ճանապարհով։

Սովետական հասարակության տնտեսական, քաղաքական, մշակութային պատմության, մասնավորապես նրա վերջին ժամանակաշրջանի սկզբնաղբյուր-

ներր՝ փաստաթղթերն ու նյութերը ցրված են դեռևս չմշակված արխիվներում ու պարբերական մամուլում։ Դա իր հերթին լրացուցիչ դժվարություններ է հարուցում այդ շրջանի ուսումնասիրության համար։

Սովետական ժամանակաշրջանի, մասնավորապես նրա 30-ական թթ. հետո ընկած շրջանի պատմությունն ուսումնասիրողների առջև ծառացած է մի բավական լուրջ խնդիր, որի հետ մշտապես հաշվի պետք է նստել։ Դա այն է, որ անհատի պաշտամունքի շրջանի արխիվներն ու նյութերը տառապում են միակողմանիությամբ, տենդենցիոզությամբ։

Երբեմն միակողմանիորեն են ընկալվում պատմական թեմայի ակտուալության և պատմագիտությունը կյանքին մոտեցնելու հույժ կարևոր խնդիրները։

Թեմայի ակտուալությունը միայն նրա ժամանակակից լինելով չի բնորոշվում, չնայած այդ շատ կարևոր հանգամանք է, այլ նախ նրա հասարակական նշանակությամբ և մյուս կողմից նաև այն կարևոր հանգամանքով, թե որքանով է հեղինակին հաջողվել թեման ուսումնասիրել արդիականության դիրքերից, նրանում արծարծվող հարցերը լուծել գաղափարական բարձր մակարդակով։ Հետևաբար, բնավ զարմանալի չպետք է թվա, եթե ասենք, որ ժամանակակից թեման երբեմն կարող են այնպիսի եղանակով ու որակով ուսումնասիրվել, որ ակտուալ նշանակություն չունենա և ընդհակառակն, հին կամ հնագույն շրջանի թեմաները կարող են այնպիսի եղանակով ու որակով ուսումնասիրվել, որ ունենան կարևոր ակտուալ նշանակություն։

Հատկապես վերջին տարիներս պարտիան հասարակական գիտությունները կյանքի հետ կապելու, այն արտադրությանը մոտեցնելու հրատապ պահանջն ավելի է ուժեղացնում։

Պատմության բնագավառում այդ նշանակում է առաջին հերթին հետազոտել և լուսաբանել ներկա էտապում բանվոր դասակարգի ու գյուղացիության, սոցիալիստական քաղաքների ու գործարանների, սովխոզների ու կոլտնտեսությունների պատմությունը և նման կարևոր թեմաներ։

Սա ճիշտ է և անառարկելի, սակայն, պատմագիտությունը կյանքին մոտեցնելու պահանջը սահմանափակել միայն դրանով, ինչպես կարծում են ոմանք, նշանակում է տուրք տալ միակողմանի, պարզեցված պատկերացման։

Պատմական գիտությունը կյանքին մոտեցնել նշանակում է նաև ստեղծել ընթերցող հասարակայնությանը հուզող, նրան գաղափարական սնունդ տվող, նրա հոգեկան ու բարոյական դաստիարակությանը նպաստող և մտավոր պահանջմունքները բավարարող անցյալի հասարակական հարաբերությունները ճիշտ բացահայտող գիտական աշխատություններ։

Անհատի պաշտամունքի պայմաններում լիարժեք գիտական-ստեղծագործական ուսումնասիրությունների փոխարեն հաճախ երևան էին գալիս անարժեք, սխեմատիկ, հայցեպ գրված աշխատություններ, որոնք ոչնչով չէին կարող բավարարել ընթերցողների և գիտության պահանջները, հետևաբար և կտրված էին կյանքից, նրա առաջադրած խնդիրներից։ Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ նման աշխատությունները շատ վատ էին սպառվում։

Հաճախ ստեղծվում էին և այժմ էլ շարունակում են ստեղծվել տվյալ թեմային և եղած նյութերին անհամապատասխան, միանգամայն անհարկի ուռճացված ստվարածավալ ուսումնասիրություններ, որի հետևանքով հրապարակ են գալիս ընդհանուր, հանրահայտ երևույթների շարադրանքով ծան-

բաբեռնված հաստափոր գրքեր։ Ստեղծվել են այնպիսի պայմաններ, որ առանձին դեպքերում, գիտական աշխատության կշիռը որոշվում է նրա ծավալով, իսկ գիտաշխատողի մասին գաղափար կազմելու համար նկատի է առնվում ոչ այնքան նրա կատարած ուսումնասիրությունների պատմագիտական արժեքը, որքան ծավալը և հատկապես աշխատությունների քանակը։

Պատահական չէ, որ վերջերս շատ սուր կերպով է դրվում աշխատությունների որակը բարձրացնելու հարցը, չնայած որ գործնականում դեռևս քիչ բան է արվում այդ ուղղությամբ։

Բուրժուական պատմագրության դեմ պայքարը, հասկանալի է, սոցիալիզմի և կապիտալիզմի միջև մղվող ընդհանուր գաղափարական պայքարի մի մասն է։

«Հասարակական գիտությունները այսուհետև ևս,—ասված է ՍՄԿՊ Ծրագրում,—պետք է վճռականորեն հանդես գան բուրժուական գաղափարախոսության դեմ, աջ սոցիալիստական տեսության և պրակտիկայի դեմ, ռևիզիոնիզմի և դոգմատիզմի դեմ, պաշտպանելով մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների անաղարտությունը»[1]։

Սովետահայ պատմագիտությունը ուրույն խնդիրներ ունի կատարելու նաև այս բնագավառում, մի կողմից՝ պայքարել հայ ժողովրդի, մասնավորապես նոր և նորագույն շրջանի պատմության խեղաթյուրումների դեմ, մյուս կողմից աջակցել սփյուռքահայ առաջադիմական գործիչներին, ռեակցիայի և համաշխարհային իմպերիալիզմի դեմ նրանց պայքարում, նպաստել նրանց քաղաքական և գիտական կողմնորոշմանը, նրանց աշխատությունների հրապարակմանը և այլն։

Պատմական գիտությունը հզոր զենք է հասարակական զարգացման օրինաչափությունները ճանաչելու համար։ Պատահական չէ, որ ՍՄԿՊ Ծրագրում, որպես պատմական գիտության կենտրոնական խնդիր, առաջ է քաշվում մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների բացահայտումը։

ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը նախաձեռնել է ռեսպուբլիկայի լավագույն մասնագետների ուժերով ստեղծելու հայ ժողովրդի պատմության ութհատորյակ։ Չնայած որ մեր ժողովրդի պատմության ուսումնասիրությունը մեծ ու հարուստ անցյալ ունի, սակայն, այսպիսի ընդհանրացնող, գիտական-ակադեմիական աշխատություն առաջին անգամ է ստեղծվում։

Բազմահատորյակում անցյալի պատմագրության հարուստ նյութի, մասնավորապես սովետահայ պատմագրության հաջողությունների ընդհանրացումով, ժամանակի անհրաժեշտությամբ թելադրված նրա սխալներն ու թերությունները գիտական-ստեղծագործական աշխատանքով հաղթահարելու եղանակով պետք է բացահայտվեն հայ ժողովրդի պատմության զարգացման աստիճանական պրոցեսը, նրա յուրահատկություններն ու օրինաչափությունները։

«Գիտության զարգացման անհրաժեշտ պայմանը,—ասված է ՍՄԿՊ Ծրագրում,—ընկերական ազատ բանավեճերն են, որոնք նպաստում են հասունացած պրոբլեմների ստեղծագործական լուծմանը»[2]։

---

1 ՍՄԿՊ Ծրագիր, Երևան, 1961, էջ 155։

2 Նույն տեղում։

Պատմության ինստիտուտի և ընդհանրապես սովետահայ պատմագրության առջև ծառացած մեծ և պատասխանատու խնդիրները հնարավոր է կենսագործել միայն նպատակասլաց կերպով բոլոր ուժերը մոբիլիզացնելու, պատմական գիտության ասպարեզում աշխուժություն մտցնելու, գիտական ստեղծագործական բանավեճեր ու հրապարակային քննարկումներ կազմակերպելու եղանակով։

Վ. Բ. ԲԱԼԲԽՈՒԴԱԼՅԱՆ
(ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի
դիրեկտորուհի)։